

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՈՒ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՈՐ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
Մարուքյան Ա. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)

Բանալի բառեր՝ ցեղասպանություն, հայ ժողովուրդ, նենգափոխում, միջազգային ատյան, սփյուռք, ռազմավարություն:

Հայոց ցեղասպանության ընթացքում և դրանից հետո թուրքական կողմը ձեռնամուխ եղավ մշակելու այդ հանցագործությունը ժխտող կամ նենգափոխող մի շարք վարկածների մշակմանն ու ներկայացմանը, որոնք հետագայում վերածվեցին Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական պետական «հայեցակարգի»:

Միևնույն ժամանակ հայ ժողովուրդը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարում կարողացել է հասնել տարբեր երկրների խորհրդարանների կամ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման կամ դատապարտման բանաձևերի ընդունմանը: Պայքարի նման ռազմավարության ընտրությունն ունեցել է թե՞ օբյեկտիվ և թե՞ սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառների թվում կարելի է նշել այն, որ խորհրդայնացումից հետո Հայաստանը, լինելով ԽՍՀՄ-ի կազմում, ի գորու չէր բարձրացնել այդ հարցը միջազգային ատյաններում, այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործն իր վրա էր վերցրել Սփյուռքը, որը, չլինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, իր ուժերի ու հնարավորությունների սահմաններում ձգտում էր գոնե հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը կոնկրետ երկրների կողմից: Սուբյեկտիվ պատճառներից առաջինը կարելի է նշել այն, որ ընդհանուր առմամբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը եղել է

պատասխան թուրքական ժխտողականությանը և ընթացել է կեղծիքին պատասխանելու տրամաբանությամբ:

Ներկայումս տվյալ ռազմավարությունը, որը նաև թելադրված էր թուրքական ժխտողականությամբ, այլևս անարդյունավետ և անհեռատես է, և պայքարի նոր ռազմավարությունը պետք է տարվի Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման ու հաղթահարման ուղղությամբ: Սա ենթադրում է ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչում ու դատապարտում, այլև՝ հատուցում կատարված հանցագործության համար, ինչը, թերևս, ամենակարևորն է և առանց որի թե՞ ճանաչումը և թե՞ դատապարտումը դառնում են ուղղակի անիմաստ: Այս առումով Հայաստանի ու Սփյուռքի համապատասխան կառույցներն ու մասնագետները պետք է ստեղծեն ռազմավարական փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հիմնավորման պատմաիրավական փաթեթը»: Այդ «Պահանջների փաթեթում» հստակորեն պետք է ամրագրվի, թե հայ ժողովուրդն ինչ է հասկանում Հայոց ցեղասպանության հետևանքներ ասելով և ինչ պահանջներ է պատրաստվում ներկայացնել Թուրքիային: «Պահանջների փաթեթի» հիման վրա պետք է մշակվի նաև մարտավարական, կիրառական փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հայեցակարգը», որում մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է լինելու հասնել վերը նշված հետևանքների վերացմանը:

THE TURKISH DENIAL AND THE NECESSITY OF NEW STRATEGY OF THE
CONDEMNATION AND RETRIBUTION OF THE ARMENIAN GENOCIDE

Marukhyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of
History, Armenia)